ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋԱՐԼՋ ՍԱՐԿԱՎԱԳ ՓԻՆԱՃՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՁԱՒԱԿԻՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ԲԱՐԵՇՆՈՐՀ ՁԱՐԼՋ ՍՐԿ. ՓԻՆԱՃԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՖԷՐԼՈՆ, ՆԻՒ ՃԸՐՋԻ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արևելեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ Դուք աւելի քան լիսուն տարիներ անխոնջ աշխատանքով և բազմօգուտ ծառայութեամբ Ձեր նպաստը բերած էք Ֆէրլոն Նիւ Ճըրզիի Սրբոց Ղևոնդեանց եկեղեցւոյ պայծառացման և բարգաւաճման:

Հայ Եկեղեցւոյ հանդէպ Ձեր սէրն ու յարգանքը արտայայտած էք՝ անդամակցելով գործօն և օգտաշատ մասնակցութեամբ Ծխական Խորհուրդին և զանազան յանձնախումբերուն: Դուք եղած էք թեմական պատգամաւոր՝ Ձեր ընտանեկան կեանքն ու գործը միախառնելով Հայ ժողովուրդի մեծ ընտանիքին՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ և ազգային կեանքին՝ միշտ հաւատարիմ մնալով մեր Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Մէկ խօսքով՝ մեր Ս. Եկեղեցին Նիւ Ճըրզիի մէջ, Արևելեան Թեմի Առաջնորդարանի մակարդակի վրայ և Մայր Աթոռի զօրացման տեսակէտէն՝ մշտական և տիրական ներկայութիւն եղած է Ձեր կեանքին մէջ:

Ի գնահատութիւն Ձեր անսակարկ, հաւատաւոր և անվերապահ ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանը:

Կ՚աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ անփոխարինելի բարիքները քաջառողջ կեանքի և անսպառ երջանկութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11 Յունուարի
Ցամի Տեառն 1999 և ի Թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/206